

ՀՀ Վայոց Ձորի մարզպետ

Արարատ Գրիգորյանին

Կանաչ Հայաստան բնապահպանական Կրթական ՀԿ նախագահ՝

Թեհմինե Ենոքյանից

Ծանուցման հասցե՝ Նոր Նորք 6-րդ զանգված, Շոպրոնի 4, բն 26

Ծանուցման էլ հասցե՝ yenoqyantehmine@gmail.com

Հեռ. 099858981

Դիմում

Հարգելի պրն Գրիգորյան, 2021 թվականի հունիս ամսին, ես՝ Կանաչ Հայաստան Բնապահպանական, կրթական ՀԿ նախագահ Թեհմինե Ենոքյանս, հարցում եմ ուղղարկել Ձերմուկ խոշորացված համայնքի նախկին ղեկավար Վարդան Հովհաննիսյանին այն մասին, թե երբ է պլանավորվում Գնդեվազ գյուղի ոռոգման ջրի համակարգի արդիականացում:

Պրն Հովհաննիսյանի կողմից հարցումս ուղղվել է ՀՀ Վայոց Ձորի մարզպետին, Տարածքային կառավարման եվ ենթակառուցվածքերի նախարարություն, ՀՀ Ջրային Կոմիտե: ՀՀ Ջրային Կոմիտեից ստացել եմ պատասխան, բառացի մեջբերում եմ. «Համաձայն Վայոց Ձորի մարզպետարանի և Ջերմուկի համայնքապետի գրությունների, առաջնահերթ համարելով Գնդեվազ գյուղի սպասարկող ոռոգման ջրանցքի ռեսուրսների ռացիոնալ օգտագործումն ու համակարգի արդիականացումը, պլանավորվել է բարձրացված հարցը կարգավորել 2022 թվականի սոբվենցիոն ծրագրերի շրջանակներում»:

Ջերմուկի համայնքի նախկին ղեկավար Վարդան Հովհաննիսյանի պատասխանը սույն հարցի վերաբերյալ. «Պլանավորվել է 2022 թվականի սոբվենցիոն ծրագրերի շրջանակներում՝ առաջնահերթ համարելով նշված ոռոգման ջրանցքի ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը և համակարգումը»:

2. 2. Վ.Ս.ՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ
14/11/2022 8829

Խնդրի լուծումն առաջնահերթ է համարել նաև ՀՀ Վայոց Ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանը:

Մինչև դեռ 2022 թվականի ընթացքում չեմ նկատել, որ քայլեր են ձեռնարկվել Գնդեվազի ոռոգման ցանցը արդիականացնելու ուղղությամբ:

Ավելին, իմ միջոցներով էքսկավատոր եմ վարձել՝ իր աշխատանքի արժողությամբ 90 000 դրամ և ջրագծի անցկացման հողային աշխատանքներ եմ իրականացրել Գնդեվազում հիմնադրված 3 հա հողատարածքը, որից 2 հա այգի է հիմնադրված ոռոգելի դարձնելու համար:

Սակայն, ինչպես ես, այնպես էլ Գնդեվազ գյուղի բնակիչները բախվել են հետևյալ խնդրին. այն ջրագիծը, որից մենք պետք է միացում կատարենք մեր այգիները ոռոգելու համար, առնվազն 46 ատմոսֆեր ճնշում ունի, մենք պարտավոր ենք առնվազն 3 դույմ՝ 16 ատմոսֆեր ճնշմամբ խողովակ գնել, որպեսզի կարողանանք անվնաս ոռոգման ջրագիծ քաշել, հետագայում չպայթի 1 մետր խորությամբ փորված հողային շերտի տակ: 1 մետր խողովակի գինը շուկայում 1950 դրամ է, մի ուղղությամբ 300 մետր ջրագիծ քաշելու համար միայն խողովակի արժեքը կկազմի 600 000 դրամ՝ առաքումը ներառյալ:

Ընդհանուր ջրագծից օգտվելու համար երկու ուղղությամբ է պետք տանել: Կոպիտ հաշվարկներով մեզ անհրաժեշտ է 2 մլն դրամ գումար, որը կբավականացնի ամբողջական շինարարական աշխատանքներն իրականացնելու համար:

Խնդրում ենք ձեզ տրամադրել միջոցներ և օգնել գյուղացուն գյուղատնտեսական հոգսը թեթևացնել, նպաստել ջրի խնայողությանը և նոր այգիների հիմնադրմանը:

Կից ուղղարկում եմ պետական մարմիններից ստացված փաստաթղթերը:

Դիմումի պատճեն ուղղարկվել է ՀՀ տարածքային կառավարման եվ ենթակառուցվածքների նախարարություն, Ջերմուկի համայնքապետ Վահագն Արսենյանին, ՀՀ Ջրային Կոմիտե:

Կանխավ շնորհակալություն

«Կանաչ Հայաստան» բնապահպանական-կրթական ՀԿ նախագահ

Թեհմինե Ենոքյան



Հարգանքներով՝

Թեհմինե Ենոքյան

17. 11. 2022թ.